

# Խաժական և K-կտորները

Երբ խաժական դեռ փոքր էր և նոր էր հաճախում օլիմպիական խմբակ, նրան առաջարկեցին հետևյալ խնդիրը.

Տրված է թվերի հաջորդականություն: Հարկավոր է հաջորդականության յուրաքանչյուր  $k$  երկարության կտորում հաշվել պարզ թվերի քանակը և արտածել դրանցից մեծագույնը:

Խաժական բավականին արագ գտավ արդյունավետ լուծում և գրեց ծրագիրը: Հիմա հերթը ձերն է:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է հաջորդականության  $n$  ( $1 \leq n \leq 50000$ ) երկարությունը և  $k$  թիվը ( $1 \leq k \leq n$ ): Երկրորդ տողում տրված են իրարից մեկ բացատով անջատված  $n$  դրական ամբողջ թվեր, որոնք չեն գերազանցում  $10^8$ -ը:

## Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ թիվ,  $k$  երկարության կտորներից առավելագույն թվով պարզ թվեր պարունակող կտորում պարզ թվերի քանակը:

## Օրինակ

**Մուտք.**

6 3

2 5 10 3 6 7

**Ելք**

2